ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ օլիմպիադա 2-րդ փուլ

1. Որքա՞ն է Կուր գետի երկարությունը:

2. Ո՞ր թվականին է հիշատակվում Սարդուրի I-ը ասորեստանյան արձանագրություններում:

3. Ո՞րն էր Դիաուխիի կենտրոնը:

4. Ո՞ր թվականին է Ասորեստանի գլխավոր զորահրամանատարը գրել, որ Արգիշտի արքայի «*անունն անգամ ահարկու է որպես ծանր հողմ, նրա ուժերը մեծաքանակ են…*»:

5. Լրացրեք բաց թողնված բառերը.

   «*Ք.ա. 716 թ. …(ա) համար Ասորեստանի և Ուրարտուի միջև պայքարը վերածվեց վճռական պատերազմի: Սակայն նույն տարվա աշնանը հյուսիսից անակնկալ հայտնվեցին քոչվոր …(բ) ցեղերը՝ ասպատակելով Վանի թագավորության տարածքները*»:

   ա.

   բ.

6. Ո՞վ է ստորև բերվող տողերի հեղինակը.

   «*Ինչպիսին էլ որ լինեն ասորեստանյան քաղաքակրթության արժանիքները, չպետք է թաքցնել, որ Ասորեստանը զուրկ էր մարդու ունեցած արժեքների գիտակցությունից, որ այնքան էական է քաղաքակրթության համար: Աշուրի տիրակալների անգթությունն առասպելական էր…*»:

7. Ո՞ր թագավորն է թողել հետևյալ արձանագրությունը.

   «*Արշավեցի Բաբիլու(նի) երկրի վրա: Գրավեցի Բաբիլու(նի) երկիրը: Կտրում էի մինչև Բարուաթա (երկիրը)*»:

8. Ո՞վ է ստորև բերվող տողերի հեղինակը.

«*Արիարաթեսը, պարտվելով ճակատամարտում, ընկավ, որից հետո թե՛ Կապադովկիան և թե՛ նրան սահմանակից երկրներն ընկան մակեդոնացիների տիրապետության տակ: Իսկ Արիարաթեսը՝ նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամանակ ստեղծված դրությունից, քչերի հետ ապաստանում է Հայաստանում*»:

9. **Ո՞ր հույն պատմիչն է Արտաշեսին անվանում «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»**:

10. **Որքա՞ն հեծյալներից էր բաղկացած Մեհրուժան զորավարի զորաջոկատը, որը մարտի բռնվեց հռոմեական զորքի հետ:**

11. **Կարդացե՛ք տեքստը և պատասխանեք հարցերին.**

«*Երբ հռոմեացիները, բարեհաջող հասնելով գետի հանդիպակաց ափը, ոտք դրեցին հայկական հողի վրա… համբուրում էին քարերն ու ավազը և, իրար գրկելով, ուրախությունից լաց էին լինում*»:

ա. Ո՞վ էր հռոմեական զորքերի հրամանատարը:

բ. Ո՞ր թվականին տեղի ունեցած իրադարձություններն են նկարագրվում:

ա.

բ.

12. **Ո՞վ է եղել Հայաստանի թագավորը 4-6 թթ.:**

13. **Ո՞վ է եղել Հռոմի կայսրը 98-117 թթ.:**

14. **Ո՞ր թվականին Կարակալլան խաբեությամբ իր մոտ՝ Ասորիք հրավիրեց Խոսրով I-ին և ձերբակալեց նրան**:

15. **Ինչպե՞ս է ուրարտական արձանագրություններում հիշատակվում Ծոփք տեղանունը:**

16. **Ո՞վ է ստորև բերվող տողերի հեղինակը.**

«*Հայերի մեջ իշխում է մի յուրատեսակ առևտրական ոգի, այն է՝ նրանք զբաղվում են փոխանակությամբ՝ ճամփորդելով Չինաստանի սահմաններից մինչև Կորսոյի հրվանդանը Գվինեական ծովափին: Դա ցույց է տալիս այս բանական և աշխատասեր ժողովրդի յուրահատուկ ծագումը, ժողովուրդ, որն անցնում է համարյա ամբողջ Հին աշխարհով՝ հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք, և*

կարողանում է ջերմ ընդունելության արժանանալ բոլոր ժողովուրդների կողմից, ում մոտ որ լինում է»:

17. Ո՞ր ավանում էր Նանե դիցուհու պաշտամունքի գլխավոր կենտրոնը.

18. Ո՞ր քաղաքի մասին են ստորև բերվող տողերը.
«*...կային առատ գանձեր և աստվածներին նվիրված թանկարժեք ընծայաբերումներ, քանզի բոլոր հասարակ մարդիկ և իշխանավորները, հանուն արքայի հանդեպ ունեցած սիրո և հարգանքի, իրար հետ մրցում էին քաղաքի ընդարձակման և բարեկարգման համար*»:

19. Գառնու տաճարը չորս կողմերից քանի՞ սյուներով է շրջապատված:

20. Ո՞ր գետի ափին Երվանդ IV-ը կառուցեց Բագարան քաղաքը:

21. Ինչպե՞ս է կոչվում IV դ. հռոմեական աշխարհագրագետ Կաստորիոսի կազմած աշխարհագրական քարտեզ-ուղեցույցը:

22. Ի՞նչ պաշտոնում նշանակեց Տրդատ III-ը Օտա Ամատունուն:

23. Ո՞ր թվականներին է կառավարել Շապուհ II Երկարակյացը:

24. Ո՞ր թվականին Արշակ II թագավորն ու Վասակ սպարապետը մեկնեցին Պարսկաստան:

25. Ի՞նչ էր պարսիկ պաշտոնյայի անունը, ով 447 թ. Հազկերտ II-ի հանձնարարությամբ Արևելյան Հայաստանում անցկացրեց աշխարհագիր:

26. Ո՞վ է զբաղեցրել կաթողիկոսական աթոռը 461-478 թթ.:

27. Որտե՞ղ է կայացել 431 թ. տիեզերական ժողովը:

28. Ո՞ր թվականին Հայաստանում մարզպան նշանակվեց պարսիկ Սուրենը:

29. Ե՞րբ է Խոսրով II-ը գումարել Տիզբոնի ժողովը, որին մասնակցում էին պարսից տիրապետության տակ հայտնված երկրներից հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ:

30. Ե՞րբ է տեղի ունեցել Յարմուքի ճակատամարտը:

31. Որքա՞ն բանակով 653 թ. Կոստանդին II-ը ներխուժեց Հայաստան:

32. Ո՞վ դարձավ Հայոց իշխան 753 թ.:

33. Կարդացեք տեքստը և պատասխանե՛ք հարցերին.

«*Իսկ քաջահաղթ նահատակները, թեպետև սակավաթիվ էին... սակայն դառնաշունչ օրհասական պահին ահի չմատնվեցին, այլ բոլորը, միահամուռ հավաքվելով, իրար քաջալերում էին հետևյալ խոսքերով. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի... Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի փոխարեն և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր մահվան դիմաց կա հավիտենական կյանք*»:

ա. Ո՞վ է տեքստի հեղինակը:

բ. Ո՞ր ճակատամարտին են վերաբերում այս տողերը:

ա.

բ.

34. Ո՞վ է ստորև բերվող խոսքերի հեինակը.

«*Եվ այսպես նա բազում նեղություններ կրեց՝ իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը, նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերենի նշանագրեր*»:

35. 869 թ. որտե՞ղ կայացած եկեղեցական ժողովը մերժեց բյուզանդական եկեղեցու հետ դավանական միության առաջարկը:

36. Պատասխանեք հարցերին.

ա. Ո՞ր թվականին հիմնվեց Տաշիր-Զորագետի թագավորությունը:
բ. Ո՞վ դարձավ դրա առաջին թագավորը:
ա.
բ.

37. Ո՞ր թվականին Ծոփքի Պաղնատուն կիսանկախ գավառի հայ իշխաններն ապստամբություն բարձրացրին բյուզանդական տիրապետության դեմ:

38. Սելջուկ-թուրքերի Անի ներխուժման մասին ո՞ր պատմիչն է գրել ստորև բերվող տողերը.
«*Նրանք սկսեցին անգթորեն կոտորել քաղաքի ողջ բնակչությանը, դալար խոտի նման հնձեցին քաղաքացիների այդչափ բազմությունը և նրանց դիակները քարակույտի նման դիզեցին: Ամբողջ քաղաքն արյան մեջ էր ծփում*»:

39. 1124 թ. Անիի բնակչությունը ո՞ր թագավորի մոտ ուղարկեց պատվիրակություն՝ քաղաքը նրան հանձնելու իրենց մտադրությունը հաղորդելու համար:

40. Ո՞ր թվականին Զաքարյանների շառավիղները ստեղծեցին Սամցխե-Ջավախքի իշխանությունը:

41. Ո՞րն էր Փիլարտոս Վարաժնունու իշխանության կենտրոնը:

42. Ո՞ր թվականին Մլեհը Սիսը դարձրեց Կիլիկիայի մայրաքաղաք:

43. Ե՞րբ է տեղի ունեցել Մառիի ճակատամարտը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

44. Ո՞ր թվականին կնքված հայ-եգիպտական պայմանագրով էր Կիլիկիան պարտավորվել Եգիպտոսին վճարել 1,2 մլն արծաթ դիրհեմ, Այաս նավահանգստից ստացած եկամուտների կեսը և օտարերկրացիներին վաճառած աղից ստացված եկամուտների կեսը:

45. Ո՞վ է Կիլիկիայում 1260-1289 թթ. զբաղեցրել արքունի քարտուղարության (կանցլեր) պաշտոնը:

46. Ո՞վ է ստորև բերվող տողերի հեղինակը.

«Ջուղայի բոլոր բնակիչները... ելան շահին ընդառաջ, ինչպես վայել է թագավորին... Գետեզրից մինչև խոջա Խաչիկի ապարանքը փռել էին գորգեր թագավորի ոտքերի տակ, թանկարժեք, մեծահարգի ու վայելուչ կերպասներ, որոնց վրայով թագավորն անցավ գնաց խոջա Խաչիկի տուն: Իսկ այնտեղ՝ տանը, խոջա Խաչիկը ոսկով լցված ոսկե սկուտեղը իր որդու ձեռքով մատուցեց թագավորին, նույնպես և Ջուղայի բոլոր մեծամեծերը ընծաներ մատուցեցին, ինչպես վայել է թագավորին: Շահն այնտեղ մնաց երեք օր, իսկ ջուղայեցիները պատվեցին նրան համադամ կերակուրներով ու ծաղկահամ գինով...»:

47. Ե՞րբ Օսմանյան պետությունը գրավեց Ղրիմը:

48. Ո՞ր գաղթօջախում է 1616 թ. հիմվել հայկական տպարան:

49. Ո՞վ է հեղինակել «Գիրք հարցմանց», «Ամռան հատոր» աշխատությունները:

50. Ո՞վ է 1620 թ. հիմնադրել Երևանի Անանիա առաքյալի անապատը:

51. Ո՞վ է հեղինակել «Անգիտաց անպէտ» աշխատությունը:

52. Արցախի ո՞ր սղնախը շարունակեց պայքարը թուրք նվաճողների դեմ 1729-1731 թթ.:

53. Ո՞ր թվականին Հովսեփ Էմինը վերադարձավ Հնդկաստան:

54. Քանի՞ մահալներից էր բաղկացած Նախիջևանի խանությունը XIX դ. սկզբում:

55. Ո՞ր գեներալի գլխավորությամբ են ռուսական զորքերը 1808 թ. արշավել Երևան:

56. Ե՞րբ է կնքվել Բուխարեստի պայմանագիրը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

57. Ո՞վ էր ղեկավարում Լոռի-Փամբակի հայ աշխարհազորայիններին 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ:

58. Որքա՞ն էր հայ աշխարհազորայինների թիվը, ովքեր ռուսական կայազորի հետ միասին մասնակցում էին Շուշիի 1826 թ. պաշտպանությանը:

59. 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ե՞րբ ռուսները գրավեցին Թավրիզը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

60. 1830 թ. ո՞վ նշանակվեց Հայկական մարզի կառավարիչ:

61. Ե՞րբ է հիմնվել Կովկասի փոխարքայությունը:

62. Ե՞րբ է շարք մտել Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղին:

63. 1910 թ. Արևելյան Հայաստանի ո՞ր քաղաքն ուներ 35 հազար բնակչություն:

64. Ո՞ր թվականին է տեղի ունեցել Բաշկադըկլարի ճակատամարտը:

65. Ո՞վ է ստորև բերվող տողերի հեղինակը.

«Հայտնե՛ք կորպուսի հրամանատարին, որ ես գրոհում եմ անվերադարձ: Եթե Կարսը չգրավեմ գիշերը, ապա կվերցնեմ ցերեկը կամ կշարունակեմ գրոհը մինչև հաջորդ գիշեր»:

66. Նշեք, թե ո՞ր չորս գավառներն էին մտնում 1878 թ. Ռուսական կայսրության կազմում ստեղծված Կարսի մարզի մեջ:

ա.
բ.
գ.
դ.

67. Ե՞րբ է օսմանյան սուլթանը վավերացրել «Ազգային սահմանադրություն» կոչվող կանոնադրությունը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

68. Ազատագրական ո՞ր խմբակն է ստեղծվել Մեծ Ղարաքիլիսայում 1874 թ.:

69. Ե՞րբ է տեղի ունեցել Օսմանյան դրամատան գրավման գործողությունը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

70. Ո՞ր թվականին են ծնվել հայդուկային պայքարի նշանավոր գործիչներ Աղբյուր Սերոբը և Հրայր Դժոխքը:

71. Ինչպե՞ս էր կոչվում 1891 թ. Թավրիզում ՀՅԴ հիմնած զինագործական արհեստանոցը:

72. Ո՞վ է հեղինակել «Հայերի ջարդը Տրապիզոնում. 1895 թ.» և «Նավերի բեռնումը» կտավները:

73. Ե՞րբ Նիկոլայ II-ը չեղարկեց Հայ եկեղեցու գույքի բռնագրավման վերաբերյալ օրենքը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

74. Ո՞վ ընտրվեց Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի նախագահ:

75. Ո՞ր թվականին ցրվեց Պետական երկրորդ դուման:

76. Ո՞ր թվականին է տեղի ունեցել ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովը:

77. Սասունի 1904 թ. ապստամբության ժամանակ ո՞ւմ ղեկավարությամբ Սասունի անզեն բնակչությունն ու վիրավորները իջեցվեցին Մշո դաշտ:

78. Որտե՞ղ է կայացել Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը:

79. 1908 թ. հոկտեմբերին բացված Օսմանյան մեջլիսի պատգամավորներից քանի՞սն էին հայեր:

80. Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսը և Գերմանիայի դեսպան Հ. Վանգենհայմը ե՞րբ կազմեցին Արևմտյան Հայաստանի համար 6 կետից բաղկացած բարենորոգումների ծրագիր (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

81. Հոլանդացի ո՞ր դիվանագետը 1914 թ. նշանակվեց Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի նահանգներն ընդգրկող մասի տեսուչ:

82. Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարելուց հետո 1914 թ. ո՞վ նշանակվեց մոտ 182-հազարանոց կովկասյան ռուսական բանակի գլխավոր հրամանատար:

83. Առաջին աշխարհամարտի ժամանակ ե՞րբ ռուսները գրավեցին Էրզրումը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

84. 1910-1917 թթ. ո՞վ է եղել Թիֆլիսի քաղաքապետը:

85. Որտե՞ղ է կազմավորվել Դրոյի գլխավորած կամավորական երկրորդ ջոկատը:

86. 1914 թ. հուլիսին որտե՞ղ է գումարվել ՀՅԴ VIII ընդհանուր ժողովը:

87. Ո՞վ էր Մուշի ինքնապաշտպանության ղեկավարը 1915 թ.:

88. Մուսա լեռան վրա ինքնապաշտպանություն կազմակերպած հայերը Եգիպտոսի ո՞ր քաղաք տեղափոխվեցին:

89. Մեծ եղեռնի ժամանակ որքա՞ն եկեղեցիներ ավերվեցին, քանդվեցին ու կողոպտվեցին:

90. Ե՞րբ է ընդունվել «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

91. Ո՞վ դարձավ 1918 թ. փետրվարի 10-ից իր աշխատանքները սկսած Անդրկովկասի օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Սեյմի նախագահ:

92. 1918 թ. մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը կայացած թուրք-անդրկովկասյան բանակցությունները որտե՞ղ են ընթացել :

93. Մինչև ե՞րբ են շարունակվել մարտերը Բաշ-Ապարանում:

94. Ե՞րբ և որտե՞ղ է հիմնվել Սանասարյան վարժարանը:

95. Նշեք, ճի՞շտ են, թե՞ սխալ հետևյալ պնդումները.
ա. Գանձագին հողերը մասնավոր էին՝ ենթակա առուվաճառքի:
բ. Ավատատիրության զարգացմանը զուգընթաց՝ գյուղացու կախվածությունը խոշոր սեփականատիրոջից աճում էր:
ա.
բ.

96. 1920 թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունը բաժանվեց չորս նահանգների, նշե՛ք դրանք:

ա.
բ.
գ.
դ.

97. Ե՞րբ հրաժարական տվեց Ալեքսանդր Խատիսյանի կառավարությունը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

98. Ե՞րբ գեներալ Դևին ու Դրոն ստորագրեցին Շարուր-Նախիջևանը Հայաստանին հանձնելու մասին համապատասխան հրամանը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

99. Ո՞վ էր ղեկավարում հակախորհրդային ապստամբությունը Սիսիանում 1920 թ. հոկտեմբերին:

100. Ո՞վ էր Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն ու տեղի հոգևոր առաջնորդը:

101. Ե՞րբ է Լեռնահայաստանը վերանվանվել Հայաստանի Հանրապետություն (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

102. Ե՞րբ է ստեղծվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը:

103. Ո՞վ էր Ռուսաստանի ներկայացուցիչը Կարսի 1921 թ. կոնֆերանսում:

104. Ե՞րբ Հայաստանի տնտեսությունը հասավ նախապատերազմյան 1913 թ. մակարդակին:

105. Հարկադրական կոլեկտիվացման շրջանում՝ 1930 թ. մարտից մինչև մայիս ամիսներին Հայաստանի ո՞ր տարածքն էր ամբողջությամբ գտնվում ապստամբած գյուղացիների ձեռքում:

106. 1930-ական թթ. որքա՞ն մարդ է Հայաստանում բռնությունների ենթարկվել:

107. Ո՞ր թվականներին է Ամենայն Հայոց կաթողիկոս եղել Խորեն Ա Մուրադբեկյանը:

108. Ո՞վ էր ԽՍՀՄ սև մետաղաձուլության նախարարը (ժողկոմը) Հայրենական պատերազմի տարիներին :

109. Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիայի անձնակազմից քանի՞ հոգի են արժանացել ԽՍՀՄ հերոսի կոչման

110. ԽՄԿԿ XXI համագումարը ե՞րբ է ընդունել երկրի ժողովրդական տնտեսության զարգացման յոթամյա պլանը:

111. Ե՞րբ է շահագործման հանձնվել Արփա-Սևան թունելը:

112. Ո՞վ է նշանակվել ԼՂԻՄ-ում հատուկ կառավարման կոմիտեի նախագահ:

113. Ե՞րբ է տեղի ունեցել ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեն, որին Հայաստանը չմասնակցեց (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

114. Ե՞րբ տեղի ունեցավ Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) վերագործարկումը:

115. Գրիգոր Նարեկացին ե՞րբ է հռչակվել տիեզերական եկեղեցու վարդապետ:

116. Հայաստանը ո՞ր թվականին դարձավ Եվրախորհրդի լիիրավ անդամ:

117. 2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում սպանված Հրանտ Դինքը ո՞ր թերթի խմբագիրն էր:

118. Արցախի զինված ուժերը ե՞րբ ազատագրեցին Մարտակերտը (նշե՛ք տարեթիվը, ամիսը, ամսաթիվը):

119. Ո՞վ է 2007 թ. ընտրվել ԼՂՀ նախագահ:

120. Որքա՞ն հայեր հայրենադարձվեցին 1962-1982 թթ.:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1. 1113 կմ
2 Ք.ա. 833 թ.
3. Շաշիլո
4. Ք.ա. 780
5. ա. Մանայի

   բ. կիմերների
6. Նիկողայոս Ադոնց
7. Սարդուրի II
8. Դիոդորոս Սիկիլիացի
9. Պոլիբիոս

10. 3000

11. ա. Մարկոս Անտոնիոս

    բ. Ք.ա. 36 թ.

12. Արտավազդ IV

13. Տրայանոսը

14. 215 թ.

15. Ծուփա

16. Էմանուիլ Կանտ

17. Թիլ

18. Տիգրանակերտ

19. 24

20. Ախուրյան

21. Պետինգերյան քարտեզ

22. Հազարապետի

23. 309-379 թթ.

24. 368 թ.

25. Դենշապուհ

26. Գյուտ կաթողիկոսը

27. Եփեսոս

28. 564 թ.

29. 615 թ.

30. 636 թ.

31. 100 հազար

32. Սահակ Բագրատունի

33. ա. Ղևոնդ

    բ. Արծնիի

34. Կորյունը

35. Շիրակավանում

36. ա. 978 թ.

Բ. Գուրգենը

37. 1053 թ.

38. Մատթեոս Ուռհայեցի

39. Դավիթ Շինարար

40. 1266 թ.

41. Մարաշը

42. 1173 թ.

43. 1266 թ. օգոստոսի 23

44. 1323 թ.

45. Վահրամ Ռաբունին

46. Առաքել Դավրիժեցի

47. 1475 թ.

48. Լվովում

49. Գրիգոր Տաթևացին

50. Մովսես Տաթևացին

51. Ամիրդովլաթ Ամասիացին

52. Գյուլիստանի

53. 1770 թ.

54. 10

55. Իվան Գուդովիչի

56. 1812 թ. մայիսի 16

57. Մարտիրոս Վեքիլյանը

58. 1500

59. 1827 թ. հոկտեմբերի 13

60. Վասիլ Բեհբութով

61. 1844 թ.

62. 902 թ.

63. Ալեքսանդրապոլ

64. 1853 թ.

65. Հովհաննես Լազարև
66. Կարս, Արդահան, Կաղզվան, Օլթի
67. 1863 թ. մարտի 17
68. «Հայրենիքի սիրո գրասենյակ»
69. 1896 թ. օգոստոսի 14
70. 1864 թ.
71. «Խարիսխ»
72. Հովհաննես Այվազովսկի
73. 1905 թ. օգոստոսի 1
74. Սիմոն Զավարյան
75. 1907 թ.
76. 1898 թ.
77. Սեբաստացի Մուրադ
78. Փարիզ
79. 10
80. 1913 թ. սեպտեմբերի 10
81. Լուի Վեստենենկ
82. Իլլարիոն Վորոնցով-Դաշկով
83. 1916 թ. փետրվարի 3
84. Ալեքսանդր Խատիսյան
85. Իգդիր
86. Էրզրում
87. Հակոբ Կոտոյան
88. Պորտ Սաիդ
89. 2350
90. 1948 թ. դեկտեմբերի 9
91. Նիկոլայ Չխեիձե
92. Տրապիզոն
93. (1918 թ.) մայիսի 29

94. 1881 թ., Կարին (Էրզրում)

95. ա. Ճիշտ

բ. Ճիշտ

96. Արարատյան, Շիրակի, Վանանդի, Սյունյաց

97. 1920 թ. մայիսի 5

98. 1919 թ. մայիսի 3

99. Պողոս Տեր-Դավթյան

100. Պետրոս Սարաճյան

101. 1921 թ. հունիսի 1

102. 1923 թ. հուլիսի 7

103. Յակով Գանեցկի

104. 1928 թ.

105. Դարալագյազ

106. 15 հազար

107. 1932-1938 թթ.

108. Իվան Թևոսյան

109. 9

110. 1959 թ.

111. 1981 թ.

112. Արկադի Վոլսկի

113. 1991 թ. մարտի 17

114. 1996 թ.

115. 2015 թ.(ապրիլի 12)

116. 2001 թ.

117. «Ակոս»

118. 1993 թ. հունիսի 28

119. Բակո Սահակյան

120. 32 հազար